Նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-237 [4]-15.01.2018-ՏՏԳԲ-011/2

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

## «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ-204-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածը լրացնել նոր պարբերություններով.

«**հրագործական նյութ (արտադրանք)**՝ ինքնաշխատ օգտագործման՝ հրագործական բաղադրիչների այրման և/կամ պայթյունի միջոցով անհրաժեշտ արդյունքի ստացման համար նախատեսված հրագործական միացությունների (խառնուրդների), տարրերի, սարքավորումների ու սարքերի ամբողջություն.

**հրագործական բաղադրիչ**՝ որոշակի քիմիական նյութերի և միացությունների խտացված խառնուրդ, որը այրման և/կամ պայթյունի արդյունքում գազային, ջերմային, մեխանիկական էներգիայի արտազատման միջոցով ստեղծում է տարբեր օպտիկական, լուսային, ձայնային, էլեկտրական կամ ճնշումային ազդեցություն.

**հրավառություն**՝ հրագ ործական նյութի (արտադրանքի) և հրագործական բաղադրիչի ծրագրված կիրառում, որը կարող է վտանգել մարդու կյանքը, առողջությունը և վնասներ պատճառել շրջակա միջավայրին ու գույքին:

**բնակչությանը ազատ վաճառվող հրավառություններ**՝ կենցաղային նշանակության հրավառություններ, որոնց հետ վարվելը չի պահանջում հատուկ գիտելիքներ ու հմտություն և ճշտությամբ կատարելով դրանց փաթեթվածքների վրայի օգտագործման կարգը, ապահովվում է մարդկանց և շրջակա միջավայրի անվտանգությունը.

**տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություններ**՝ հրավառություններ, որոնց հետ վարվելը պահանջում է հատուկ գիտելիքներ և հմտություն, կատարողների (օգտագործողների) համապատասխան որակավորում և (կամ) տեխնիկական սարքավորման որոշակի պայմանների ապահովում:

***Տեխնիկական և հատուկ նշանակության հրավառությունների չափորոշիչները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:»:***

**Հոդված 2.** Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 6-րդ կետով՝

«6) հրագործական արտադրատեսակների արտադրություններ և պահման համար պահեստներ, տեխնիկական նշանակության հրագործական արտադրատեսակների շահագործման (կիրառման) համար գործարկման կայանքներ (սարքավորումներ, հրասանդեր):»:

**Հոդված 3.** Օրենքի 12-րդ հոդվածի 7-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«7. Արտադրական վտանգավոր օբյեկտի գրանցումը դադարեցվում է.

1) դրա ապամոնտաժման հետևանքով, եթե առկա է ապամոնտաժման վերաբերյալ դրական փորձագիտական եզրակացությունը,

2) փորձագետի (փորձագետների խմբի) կողմից տրված փորձագիտական եզրակացության հիման վրա, որտեղ նշված է արտադրական վտանգավոր օբյեկտի շահագործման համար ոչ պիտանի լինելու, ծառայության ժամկետի սպառման, պաշարի սպառման, կամ օբյեկտի նկատմամբ կիրառելի են ապամոնտաժվելու փաստը արձանագրելու համար հիմք համարվող այլ հանգամանքները:»:

**Հոդված 4.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

# ՏԵՂԵԿԱՆՔ

## «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված 1.*** «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ-204-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածը լրացնել ~~հետեւյալ բովանդակությամբ~~ նոր պարբերություններով.

«հրագործական նյութ (արտադրանք)՝ ինքնաշխատ օգտագործման՝ հրագործական բաղադրիչների այրման եւ/կամ պայթյունի միջոցով անհրաժեշտ արդյունքի ստացման համար նախատեսված հրագործական միացությունների (խառնուրդների), տարրերի, սարքավորումների ու սարքերի ամբողջություն.

հրագործական բաղադրիչ՝ որոշակի քիմիական նյութերի եւ միացությունների խտացված խառնուրդ, որը այրման եւ/կամ պայթյունի արդյունքում գազային, ջերմային, մեխանիկական էներգիայի արտազատման միջոցով ստեղծում է տարբեր օպտիկական, լուսային, ձայնային, էլեկտրական կամ ճնշումային ազդեցություն.

հրավառություն՝ հրագործական նյութի (արտադրանքի) եւ հրագործական բաղադրիչի ծրագրված կիրառում, որը կարող է վտանգել մարդու կյանքը, առողջությունը եւ վնասներ պատճառել շրջակա միջավայրին ու գույքին: բնակչությանը ազատ վաճառվող հրավառություններ՝ կենցաղային նշանակության հրավառություններ, որոնց հետ վարվելը չի պահանջում հատուկ գիտելիքներ ու հմտություն եւ ճշտությամբ կատարելով դրանց փաթեթվածքների վրայի օգտագործման կարգը, ապահովվում է մարդկանց եւ շրջակա միջավայրի անվտանգությունը.

տեխնիկական եւ հատուկ նշանակության հրավառություններ՝ հրավառություններ, որոնց հետ վարվելը պահանջում է հատուկ գիտելիքներ եւ հմտություն, կատարողների (օգտագործողների) համապատասխան որակավորում եւ (կամ) տեխնիկական սարքավորման որոշակի պայմանների ապահովում:»:

Տեխնիկական եւ հատուկ նշանակության հրավառությունների չափորոշիչները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

***Հոդված 2.*** Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 6-րդ կետով՝

«6) հրագործական արտադրատեսակների արտադրություններ եւ պահման համար պահեստներ, տեխնիկական նշանակության հրագործական արտադրատեսակների շահագործման (կիրառման) համար գործարկման կայանքներ (սարքավորումներ, հրասանդեր):»:

***Հոդված 3.*** Օրենքի 12-րդ հոդվածի 7-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«7. Արտադրական վտանգավոր օբյեկտի գրանցումը դադարեցվում է.

1) դրա ապամոնտաժման հետեւանքով, եթե առկա է ապամոնտաժման վերաբերյալ դրական փորձագիտական եզրակացությունը,

2) փորձագետի (փորձագետների խմբի) կողմից տրված փորձագիտական եզրակացության հիման վրա, որտեղ նշված է արտադրական վտանգավոր օբյեկտի շահագործման համար ~~ոչ պետական~~ ոչ պիտանի լինելու, ծառայության ժամկետի սպառման, պաշարի սպառման, կամ օբյեկտի նկատմամբ ~~կիրառելի է~~ կիրառելի են ապամոնտաժվելու փաստը արձանագրելու համար հիմք համարվող այլ հանգամանքները:»:

***Հոդված 4.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

# Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

**«Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների**

| Առաջարկությանն հեղինակը | Նախագծի հոդվածը, կետը, մասը, որին վերաբերում է առաջարկությունը | Առաջարկության բովանդակությունը | Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը | Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը |
|---|---|---|---|---|
| **1.** | **2.** | **3.** | **4.** | **5.** |
| ՀՀ կառավարություն | 1.«Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման | 1. «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի 1-2-րդ հոդվածներում և | 1. Ընդունվել է, նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ: | Հանձնաժողովը ընդունել է ներկայացված առաջարկությունը: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի 1-ին և 2-րդ հոդվածներ, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդված: | «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի<br><br>2-րդ հոդվածում առաջարկում ենք «հետևյալ բովանդակությամբ» բառերը փոխարինել «նոր» բառով՝ հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ մասի կանոնները:<br><br>Նույն կանոններից ելնելով՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի 1-ին հոդվածներից «հետևյալ բովանդակությամբ» բառերը հանել: | | |
| | 2. «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» | 2. «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» | 2. Ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: | Հանձնաժողովը ընդունել է |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդված: | Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդվածի «50 000-300 000» թվերը փոխարինել «հիսուն հազարից երեք հարյուր հազար» բառերով՝ հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 13-րդ մասի կանոնները: | | ներկայացված առաջարկությունը: |
| | 3. «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 3-րդ հոդված: | 3. «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի<br><br>3-րդ հոդվածում «կիրառելի է» բառերը առաջարկում ենք փոխարինել «կիրառելի են» բառերով՝ հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները: | Ընդունվել է, նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ: | Հանձնաժողովը ընդունել է ներկայացված առաջարկությունը: |
| | 4. «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդված: | 4. «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդվածը «թույլտվության համար» բառից հետո առաջարկում ենք լրացնել «օրացուցային տարվա համար» բառերով: | Ընդունվել է, առաջարկվող լրացումը կատարվել է: | Հանձնաժողովը ընդունել է ներկայացված առաջարկությունը: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | 5. «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդված: | 5. «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը «հոդվածը» բառը առաջարկում ենք փոխարինել «հոդվածի 1-ին մասը» բառերով՝ հաշվի առնելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի դրույթները: | Ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն | Հանձնաժողովը ընդունել է ներկայացված առաջարկությունը: |
| | 6. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդված: | 6. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի<br><br>1-ին հոդվածում տուգանքների չափը առաջարկում ենք սահմանել համապատասխանաբար «երեք հարյուրապատիկից մինչև հազարապատիկի չափով» և «հազար երեքհարյուրապատիկից մինչև երկու հազարապատիկի» չափերով: | Ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: | Հանձնաժողովը ընդունել է ներկայացված առաջարկությունը: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| ՀՀ ԱԺ «ԵԼՔ» խմբակցություն | 1. «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենք | 1. Նախագծերի փաթեթը լրացնել նոր՝ «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով՝ հետևյալ բովանդակությամբ.<br><br>«Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ-134-Ն օրենքի /այսուհետև օրենք/ 9-րդ հոդվածը լրացնել 12.1 մասով հետևյալ խմբագրությամբ.<br><br>«Տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության համար նախատեսված հրագործական նյութերի, հրագործական բաղադրիչների և այլ պայթուցիկ սարքերի (բացառությամբ բնակչությանը ազատ վաճառվող հրավառությունների) վաճառքը ֆիզիկական անձանց (բացառությամբ ֆիզիկական անձ հանդիսացող անհատ ձեռնարկատերերին):»: | Ընդունվել է, փաթեթը համալրվել է համապատասխան նախագծով: | Հանձնաժողովը ընդունել է ներկայացված առաջարկությունը: |
| | 2. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության | 2. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի | Չի ընդունվել, քանի որ ինչպես Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործող օրենսգրքում, այնպես էլ նոր նախագծով ամրագրված են | Հանձնաժողովը չի ընդունել առաջարկությունը: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | օրենքի նախագիծ | նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 2-4-րդ մասերով.<br><br>«Հոդված 2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետև օրենսգիրք) 219.1 հոդվածի 2-րդ մասից հանել «169.16-րդ» թիվը:<br><br>Օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «166.1» թվից հետո լրացնել «169.16,» թիվը:<br><br>Օրենգրքի 254-րդ հոդվածի 1-ին մասի<br><br>7-րդ կետի «147,» թվից հետո լրացնել «169.16,» թիվը:<br><br>Նախագծի 2-րդ հոդվածը համապատասխանաբար փոխել «Հոդված 5»-ի:<br><br>«Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:»: | որոշակի իրավախախտումներ, որոնց համար վարչական պատասխանատվության ենթարկում է վարչական դատարանը, սակայն դրանք սահմանվել են ոչ թե հաշվի առնելով տուգանքի չափի մեծությունը, այլ դրանց բնույթը, որոնց համար նախատեսված է պաշտպանության առավել բարձր դատական միջոց՝ որպես այդ իրավունքների իրականացման երաշխիք: Վարչական դատարանի կողմից վարչական պատասխանատվության ենթարկվում են միայն այն արարքների համար, որոնք կապված են անձի որոշակի իրավունքները սահմանափակելու՝ իր անմիջապես Սահմանադրությամբ նախատեսված իրավունքները սահմանափակելուն, օրինակ՝ հավաքների անցակման ժամանակ կատարված իրավախախտումներ, հայերեն լեզվի օգտագործման կանոնները | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | խախտելը, պետական մարմնին (պաշտոնատար անձին) իր օրինական գործունեության համար անհրաժեշտ օրենքով նախատեսված տեղեկությունը (տվյալը) չտրամադրելը կամ իրավախախտումների, որոնք կատարվել են վարչական մարմնի կողմից, օրինակ՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործով վարույթ իրականացնող մարմնի (պաշտոնատար անձի)՝ վարչական իրավախախտում ծնող կամ դրա կատարմանը նպաստող պատճառներն ու պայմանները վերացնելու մասին միջնորդության ուղղությամբ միջոցներ չձեռնարկելը:<br><br>Հարկ է նշել, որ որպես օրինակ վերը նշված իրավախախտումների համար վարչական պատասխանատվությունը սահմանված է նույնիսկ 100.000 ՀՀ դրամ, ինչը ևս հիմնավորում է, որ արարքի համար վարչական պատասխանատվությունը | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | կիրառող մարմինը սահմանելիս հաշվի է առնվում արարքի բովանդակությունը (էությունը), ոչ թե տուգանքի չափը: | |